

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ

Ժամանակակից աշխարհում գիտությունն է համարվում այն ներուժը, որը հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում լուծելու մրցունակ տնտեսության կայացման խնդիրը: Գիտությունն է, որ 21-րդ դարի աշխարհում Հայաստանի Հանրապետության համար կարող է ապահովել բարեկեցիկ ապագա և առաջադիմելու հնարավորություն:

Հայաստանի Հանրապետությունում գիտությունը՝ որպես երկրի անվտանգության ապահովման, տնտեսության զարգացման, կրթության, մշակույթի և հասարակության առաջընթացի կարևորագույն գործոն, մշտապես գտնվել է պետության ուշադրության ներքո:

2006 թվականին Հայաստանում սկիզբ դրվեց գիտության ոլորտի բարեփոխումներին՝ ստեղծվեց գիտության ոլորտը կանոնակարգող միջգերատեսչական հանձնաժողով, որի կողմից մշակվեցին և 2007 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվեցին գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթները և ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագիրը: Հենց հայեցակարգային դրույթներում էլ ամրագրվեց գիտության ոլորտի պետական կառավարման միասնական համակարգի ձևավորման անհրաժեշտությունը:

Եվ արդեն ՀՀ Նախագահի 2007 թվականի հոկտեմբերի 1-ի N 231-Ն հրամանագրով ՀՀ կրթության և գիտության նախարարության կառավարման ոլորտում ստեղծվեց Գիտության պետական կոմիտեն, որի խնդիրը գիտության ոլորտում քաղաքականության մշակումն ու իրականացումն է:

Գիտության պետական կոմիտեի կանոնադրական խնդիրներից են նաև հանրապետության գիտական և գիտատեխնիկական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումը և պահպանումը, գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, հասարակության մտավոր ներուժի վերարտադրումը: Եվ, ընդհանրապես, առանց մտավոր ներուժի աճի, որը պայմանավորված է կրթության և գիտության զարգացմամբ, չի հաջողվի լուծել սոցիալ-տնտեսական բարդ խնդիրներ, հասնել քաղաքացիական համաձայնության, կառուցել զարգացած ժողովրդավարական հասարակություն:

Իր հիմնական նպատակներն ու խնդիրներն իրականացնելու ճանապարհին, այս կարճ ժամանակահատվածում Գիտության պետական կոմիտեն իր նոր ձևավորվող աշխատակազմի միջոցով մշակել և գործադիր մարմնի հաստատմանն է ներկայացրել մի շարք իրավական ակտեր: Քննարկման փուլում են գտնվում «Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագիրը հաստատելու մասին», «Գիտության հիմնադրամ» ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը, մշակվում են ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են ՀՀ-ում երկաստիճան աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգային դրույթները, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը և ոլորտի համար կարևորագույն նշանակություն ունեցող այլ փաստաթղթեր:

Վերոնշյալ հայեցակարգային դրույթներում առաջ քաշված և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից է նաև գիտության ֆինանսավորման ծավալների ավելացումը և ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը, ինչն իրագործելու համար կարևորվում է պետության կողմից գիտական հիմնադրամ ստեղծելու գաղափարը: Գիտության հիմնադրամի գործունեությունը հիմնականում պետք է միտված լինի համաֆինանսավորման սկզբունքով հիմնարար և կարևորագույն կիրառական նշանակություն ունեցող գիտական հետազոտությունների ծրագրերի, ինչպես նաև

գիտական թեմաների ֆինանսավորմանը, ինչը հնարավորություն կընձեռի համադրել և կանոնակարգել արտերկրից և տարբեր միջազգային կազմակերպություններից լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավումը գիտության ոլորտ: Բացի այդ, գիտության հիմնադրամի ստեղծումը պետք է նպաստի նաև գիտությանը պետական և մասնավոր սեկտորների կողմից հատկացված ֆինանսական միջոցների նպատակաուղղված կիրառմանը՝ երիտասարդ գիտնականների գործունեությանն աջակցմանը, դրամաշնորհների հատկացմանը, ինչպես նաև գիտական սարքավորումների ձեռքբերմանը և գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը:

Գիտությունը բաց համակարգ է, այն հնարավոր չէ մեկուսացնել և զարգացնել մեկ պետության շրջանակներում: Կոմիտեի կարևորագույն խնդիրներից է նաև գիտության բնագավառում միջազգային համագործակցության միասնական մոտեցումների ձևակերպումը: Իր գործունեության մեկ տարվա ընթացքում թե՛ կոմիտեի նախաձեռնությամբ, թե՛ նրա մասնակցությամբ սերտ կապեր են հաստատվել միջազգային ասպարեզում՝ մշակվել են համապատասխան պայմանագրեր և համաձայնագրեր: Աշխատակազմի մասնագետների կողմից մշտապես լրջորեն ուսումնասիրվում և քննարկվում են գիտության բնագավառում միջազգային փորձն ու չափանիշները:

Նորաստեղծ կոմիտեն իր կանոնադրական խնդիրներն իրականացնելուց զատ 2008 թվականի ընթացքում ուներ նաև աշխատակազմը համալրելու խնդիր: Աշխատակազմի 35 քաղաքացիական ծառայության պաշտոններից Կոմիտեում կազմակերպվեց և անցկացվեց 12 թափուր պաշտոնի մրցույթ:

Կոմիտեն հետևողական է գտնվել նաև քաղաքացիների հետ սերտորեն համագործակցելու, հանրային քննարկումներ կազմակերպելու հարցերում: 2008 թվականի ընթացքում աշխատակազմ է մուտքագրվել քաղաքացիների 487 դիմում-բողոք, որոնք ուսումնասիրվել և պատասխանվել են սահմանված ժամկետներում:

Գոհար Մելիքսեյան
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի
աշխատակազմի տեղեկատվության և
հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

10.12.2008թ. N 46, «Քաղաքացիական ծառայություն» շաբաթաթերթ